

ՊՈՒՇԿԻՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ
ԳՆԱՀԱՏԱՄԱՐ

Տասնիններորդ դարի ռուս գրականության առաջին մեծության աստղերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Ա.Ս. Պուշկինը ոչ միայն իր բանաստեղծական հանճարի, այլև ռուս մոր գրականության ու լեզվի ստեղծման բնագավառում առաջամարտիկը լինելու շնորհիվ: Ստեղծագործական նրա ամնախաղեպ տաղանդը ռուս գրականությունը բարձրացրեց մոր աստիճանի: Պուշկինն իրեն դրսևորեց ոչ միայն որպես անգուգական բանաստեղծ, այլև արծակագիր, գրաքննադատ, տեսաբան, գեղագետ:

Հայ պուշկինագետները հաստատել են, որ Ա.Ս. Պուշկինի երկերի առաջին թարգմանիչը եղել է ականավոր հայագետ Մկրտիչ Էմինը, որի ուսումնառությունը և մանկավարժական գործունեությունը 1830-40-ական թվականներին սերտորեն կապված է Մոսկվայի Լազարյան ճեմարանի հետ: 1830-ական թվականներին նա գրաբարով հայ ընթերցողին է ներկայացրել Պուշկինի «Կովկասի գերին» և «Բախչիսարայի շատրվանը» երկերը:

1843թ. Հովհաննես Համազասպյանը գրաբարով թարգմանաբար հրատարակեց մի ժողովածու, որի մեջ գետեղվել էին Ժուկովսկու, Պուշկինի, Լերմոնտովի, Բարատինսկու և Գնեդիչի չափածո և արձակ մի շարք երկեր: 113 էջից կազմված գրքում գետեղված էին և ռուսերեն բնագրերը, և հայերեն թարգմանությունները, որոնցից 10-ը Պուշկինի գործերն էին:

Հ. Համազասպյանից հետո Ռափայել Պատկանյանն էր, որ թարգմանեց Պուշկինի «Գնչուներ» երկից մի հատված «Թռչնակ» վերնագրով և տպագրեց իր հոր՝ Գաբրիել Պատկանյանի խմբագրած «Վրարատ» պարբերականում: Տարիներ անց Ռ. Պատկանյանը մոր եռանդով անդրադարձավ Պուշկինի ստեղծագործությունների թարգմանությանը: Նրան նախ գրավեց «Հեքիաթ ձկնորսի և ձկան մասին» չափածո գործը, որ հայ իրականության մեջ հայտնի է «Ոսկի ձկնիկ» խորագրով, այսպես է վերնագրել նաև Ռ. Պատկանյանը: Այն տպագրվել է 1884-ին, առանձին գրքույկով և արժանացել ուշադրության: Պուշկինի «Ոսկի ձկնիկը» 1884-ին գրավեց նաև հայ դասական գրականության մի ուրիշ մեծության՝ Ղազարոս Աղայանին: Նրա ազատ թարգմանությունը աչքի էր ընկել մաքուր ու դյուրիշ լեզվով, որով էլ բացատրվում է նրա հաջողությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին Պուշկինն ավելի է հետաքրքրում հայ մտավորականներին: Այստեղ առաջնակարգ տեղը հատկացվում է Մ. Նալբանդյանին: Իր «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» (1855) աշխատու-

թյան մեջ բննարկելով հին և նոր լեզուների հարցը, նա պաշտպանում է Խ. Աբովյանի պատգամը և օրինակներ բերում իտալական, ռուսական իրականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Նա ռուս գրական լեզվի վերաբերյալ իր մտորումներն արտահայտում է խորքային իմացությամբ, առաջինը օրինակ բերելով Պուշկինին:

Խորհրդային տարիներին ևս շարունակվել է ավանդույթը: «Ոսկի ձկնիկ»-ին հայերեն խոսեցնելու իրենց կարողություններն են նվիրել Յեփիսիմե Պողոսյանը և Յուրի Սահակյանը:

«Ոսկի ձկնիկ» հայերեն թարգմանություններին նվիրած իրենց գիտական հոդվածներն են տպագրել Արամ Ղանալանյանը («Պուշկինի հեքիաթները հայ գրողների թարգմանությամբ», «Խորհրդային գրականություն», 1937, թիվ 2, էջ 245-248), Ասատուր Սմադակաճյանը («Պուշկինի «Ոսկի ձկնիկ» հայերեն թարգմանությունները», Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», Հասարակական գիտություններ, 1949, թիվ 5, էջ 31-39): Սակայն արժանին պետք է հատուցել ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանին, որ հանգամանալից պատասխանել է պուշկինագիտությանը հուզող նաև տվյալ հարցին (տե՛ս նրա «Պուշկինը և հայ բանաստեղծները» ուսումնասիրությունը):

«Լուսն» ամսագիրը Պուշկինի 100-ամյա հոբելյանը նշել է յուրատեսակ: 1899թ. «Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին» խորագրով հրատարակել է Բ գիրքը, որի հեղինակը Հայրություն Թումանյանն է: Ա բաժնում հանգամանալից ներկայացվում է Պուշկինի կենսագրությունը և ապա համառոտ բնութագրվում նրա ստեղծագործությունը: Պուշկին-երևույթը իր նշանակությամբ չի սահմանափակվում միայն պոեզիայի շրջանակներում: Հոդվածագիրը նշում է, որ նա ասպարեզ է իջել մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ռուս հասարակությունը թմրել էր օտարամոլությունից. «ատելությամբ էր վերաբերվում ղեպի իր հայրենիքը, մայրենի լեզուն և բոլոր ռուսականությունը, երբ ռուսաց գրականությունը չուներ ինքնուրույնություն և գուրկ էր ազգային ոգուց: Ապա այդ ճգնաժամին ասպարեզ եկաւ Պուշկինը, փրկեց իր ժողովուրդը օտարամոլությունից, ստեղծեց ազգային և ինքնուրույն գրականութիւն, մայրենի անուշ բարբառով հմայեց իր ազգի սիրտը և այդպիսով հաստատ ու ամսասան արծան կանգնեցրեց իր համար» (1, 334):

Ա.Ա. Պուշկինի 100-ամյա հոբելյանի առթիվ իր ազդեցիկ ու բնութագրական վերաբերմունքն է ցուցաբերել «Տարազ» ամսագիրը: 1899 թվականի 18-րդ համարում նրանում հանդես են եկել տարբեր հեղինակներ, որոնցից է Ե. Թովքյանը: Նա իր «Ազգային բանաստեղծը» հոդվածում մալս անդրադառնում է ռուս մեծ բանաստեղծի կենսագրական տեղեկություններին և ապա կոնկրետ վերլուծում ու գնահատում էպիկական երկերը:

«Տարագի» նույն համարում Մաղավոսյան ստորագրությամբ տեղ է գտել «Մատենախոսություն» հոդվածը «Գնչուներ» պոեմի մասին, թարգմանված Գ. Աստվածատրյանի կողմից: Այստեղ հեղինակը հանգամանալից դիտարկում ու գնահատում է պոեմը հոգեբանական երանգների նկատառումով: Նկարագրելով գնչուների՝ դարերի ընթացքում սրբագործված սովորությունները, հոդվածագիրը բնութագրում է Ալեքոյի կերպարը, ընդգծում պոեմի գաղափարը «Նա, ով ուզում է միայն իր ազատությունը, ազատության համար չի ծնված»:

19-րդ դարի վերջին, Պուշկինի ծննդյան 100-ամյակի օրերին պուշկինագիտության ամենախոսուն ու բազմակողմանի ուսումնասիրությունը պատկանում է Ստ. Լիսիցյանին: Իր «Ռուսաց գրականության ուղղությունները 18-րդ դարում և 19-րդի սկզբում» ծավալուն աշխատությունը կարելի է համարել Բելինսկու քննադատական ավանդույթների շարունակություն, սակայն ինքնատիպ մոտեցումներով ու գնահատման սեփական ընկալումներով: Այն այսօր էլ կարելի է ներկայացնել որպես պուշկինագիտության թարմ ու արդիական հնչողություն ունեցող լավագույն մոտեցումներից մեկը: Լիսիցյանը ռուս գրականությունը գնահատում է երկրի քաղաքական-տնտեսական կյանքի փոփոխությունների հիման վրա, ափամեջ դնում գրական առանձին ուղղությունները ներկայացնող գրողների պատմական առաքելությունները նրանց և դրական կողմերի, և թերությունների համադրությամբ: Այս ծավալուն հիմնարար լուսաբանումներից հետո նա լրիվությամբ դիտարկում, վերլուծում ու արժեքավորում է Պուշկինի գրական ժառանգությունը, ընդգծում այն նորությունները, որ բերել է նա իր ամենախաղչալ ու հավերժախոս երկերով:

Պուշկինի ստեղծագործական արագ աճի հիմքը Լիսիցյանը կապում է նրա բնատուր մեծ ընդունակությունների հետ, որ երևան էին եկել դեռևս շատ վաղ շրջանում: Տասներկու տարեկանում նա արդեն ստեղծագործում էր, առանձնապես ֆրանսիական գրականության անմիջական ազդեցությամբ: Պատահական չէ, որ նրա առաջին գործը հենց ֆրանսերեն էր: Ֆրանսիական գրականությամբ երանգավորված պատանի Պուշկինի հոգու մեջ իրենց շողերն են սկսում փռել Ժուկովսկու, Բատյուշկովի, Կռիլովի, Գնեդիչի ստեղծագործությունները: Նա միաժամանակ թերթում է 18-րդ դարի մայրենի գրականության էջերը՝ ծանոթանալով Լոմոնոսովի, Խերասկովի, Պերժալինի, Դմիտրիևի երկերին:

Ստ. Լիսիցյանը աստիճանաբար ներկայացնում և նշում է Պուշկինի պոետական զարգացման էվոլյուցիան: Նա Պուշկինի բանաստեղծական տաղանդի զարգացման այդ շրջանի եզրափակիչ գործը համարում է «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմը: «Այս գրվածքը,- նշում է Ստ. Լիսիցյանը,- նրա առաջին մեծ գործն էր և այնպիսի աղմուկ հանեց, որ վերջն էլ, երբ նա արդեն շատ ավելի կատարեալ երկեր էր տվել հայրենի գրականությանը, հասարակութունը նրան

շարունակում էր ճանաչել իբրև «Ռուսլանի երգիչ» (2, 663): Այստեղ, սակայն, կարևոր ենք համարում նշել Լիսիցյանի դիտարկումներից մեկը, որ վերաբերում է ֆրանսիական գրականությանը «Ռուսլան և Լյուդմիլա» պոեմի տիպաբանական առնչություններին:

Ստ. Լիսիցյանը գտնում է, որ չնայած ողու մի շարք գրականագետներ Պուշկինի այս երկը համարում են ազգային ոգու զուտ արտադրություն, այնքան էլ ճիշտ չէ: Նա գրում է. «Ռուսլան և Լյուդմիլան» իսկապես ամենից ավելի մոտենում է Վոլտերի հռչակավոր «Հրեական»-ին թե իւր հիմնական գաղափարով, թե նոյն իսկ առանձին մտքերով և պատկերներով. ֆրանսիական ազդեցությունը Պուշկինը թողեց միայն իւր աքսորում, երբ գտնվում էր Ղրիմում, Քիշինևում և Օդեսայում: Այսուհետև նա ավելի հակվում է դեպի անգլիական գրականությունը, սկզբում դեպի Բայրոնը, իսկ յետոյ Շեքսպիրը» (2, 663):

Բայրոնի ազդեցության տակ Պուշկինը վերջնականապես կազմեց բարձր գաղափար բանաստեղծի և բանաստեղծության ազատության մասին, մյուս կողմից՝ ավելի առաջ գնաց ստեղծագործության ճշմարտության և գեղարվեստական կատարելության ճանապարհով: Բայրոնը ավելի բորբոքեց նրա մեջ սեր դեպի բանաստեղծական ճշմարտությունը և ատելություն դեպի ամեն տեսակ կեղծություն:

Համաշխարհային գրականության և գրականագիտության խոր իմացությամբ Ստ. Լիսիցյանը միաժամանակ բացատրում է գրական ազդեցությունների և կարևորությունը, և այդ ազդեցությունից դուրս գալու ձգտումը աստվածաշնորհ գրողների կողմից: Ինչ վերաբերում է Բայրոն-Պուշկին տիպաբանական առնչությանը, Ստ. Լիսիցյանը ճշմարտացիորեն նշում է. «Բայց այս ազդեցությունը չսպանեց Պուշկինի ինքնուրույն տաղանդը, չղարծրեց նրան ստրկական հետևորդ... Պուշկինի և Բայրոնի տաղանդների մեջ այնպիսի արմատական տարբերություններ կային, որ նրանց հաղորդակցությունը երբեք չէր կարող երկարատև լինել: Մինչդեռ առաջինը կենդրոնացած էր բացառապես իւր մէջ: Պուշկինը շատ էր ենթարկւում արտաքին կեանքի տպավորութիւններին, և նրա հոգեկան յուզմունքները ականաջ լինում էին այնպէս զանազան, որպէս զանազան է ինքը կեանքը: Պուշկինը ուներ այլ ևս բացի իւր հոգուց ուրիշի հոգին էլ ըմբռնելու ընդունակութիւն, որ Բայրոնին պակասում էր» (2, 665):

Այս դիտարկումից հետո Ստ. Լիսիցյանը պատահական չի համարում այն երևույթը, որ Պուշկինը Բայրոնի պոեզիան յուրացնելուց հետո գնաց դեպի Շեքսպիրի աշխարհը: Ուստի ունեցավ 1824թ., երբ ցարական կառավարության կարգադրությամբ նա ստիպված եղավ առանց հեռանալու իրավունքի ապրել Միխայլովսկի մայրական կալվածքում: Պուշկինը սկսեց հասկանալ, թե ինչպիսի մեծ ուժ է բանաստեղծության համար կապը իրականության հետ: Եվ Շեքսպիրը նրա համար դարձավ օրենսդիր: Լիսիցյանը գրում է. «Անգլիական

այս «հսկայի» բարձունքից նա նայեց ոչ միայն Բայրոնի, այլ և առհասարակ իւր բոլոր նախորդ կուռքերի վրայ, և Վոլտերը, Մոլիերը, Կոռնելը, Պառմինը, և սրանց ընկերները թէ օտար և թէ ռուս գրականութեան մէջ նրա աչքում չնչին երևացին Շեքսպիրի հետ համեմատած: Բնականութիւնը դառավ Պուլշկինի ստեղծագործութեան հիմնական պահանջ, այս ուղղութեանը նա հետևեց իւր յաջորդ աշխատութիւնների մէջ. որոնց շարքը սկսվում է «Բորիս Գոդունովից» և վերջանում է յարծակ վէպերով» (2, 667):

Անդրադառնալով Պուլշկինի արծակին, Ստ. Լիսիցյանը նշում է, որ Շեքսպիրի ազդեցության հետ զուգընթացաբար նրա վրա զգացվում է նաև Վալտեր Սկոտի ազդեցությունը, որը դրոշեց նրան գրելու պատմական վէպեր: Վալտեր Սկոտի մէջ էլ նա գտնում էր նույն ձգտումը դէպի պատմական ճշգրիտ նկարագրությունը և հիանում էր նրանով: Լիսիցյանը հաստատում է, որ նոր ուղղությունը, որի ներկայացուցիչը ռուսաց գրականության մէջ եղավ Պուլշկինը, նախ և առաջ պահանջում էր գեղարվեստական բնականություն, ծաղրի էր ենթարկում և սենսիմենտալիզմը, և մանուկ ռոմանտիզմը, և կեղծ դասականությունը: «Այս դպրոցների արտադրութիւնների մէջ Պուլշկինը նկատում էր միայն բնութեան յեղաշրջում», - գրում է Լիսիցյանը: - Նա գտնում է, որ թէ վեհը և թէ սովորականը, թէ առաքինութիւնը և թէ արատը, թէ իղեալական ձգտումները և թէ առօրեայ մանր հոգսերը - ամենը, ինչ որ կազմում է մարդկային կեանքը, հավասարապէս կարող է դառնալ բանաստեղծութեան նիւթ» (2, 667):

Ստ. Լիսիցյանը բնութագրելով ժուկովսկու և Պուլշկինի ռոմանտիզմը, գրում է. «Բորիս Գոդունով» ողբերգութիւնը նրա առաջին գրվածքն էր, ուր նա աշխատում էր հետևել բացառապէս Շեքսպիրի գրելու եղանակին և գիտակցօրէն լինել իրական: Նոր ուղղութիւնը նա կոչում է ուրեմն «ճշմարիտ ռոմանտիզմ», որը խորին կերպով տարբերվում էր ժուկովսկու ռոմանտիզմից և նրա պէս երեսը շուռ չէր տալիս երկրային, սովորական կեանքից և չէր ապրում երկնքի ու հանդերձեալ կեանքի յոյսերով... Պուլշկինի հայեացքը ազգային ռոմանտիզմի վրա նոր էր եվրոպայում»: Ղեռավակին: Լիսիցյանը նկատում է, որ Պուլշկինը անկախ կերպով է հասել իր բանաստեղծական տեսութեանը և ոչ միայն իր ժամանակակից ռուսներից շատ առաջ գնաց, այլ և նախագուշակեց Վիկտոր Զյուգոյի երևալը, դեռ 1825թ. գրելով, որ Ֆրանսիայում առաջին համաճարը «կը լինի ռոմանտիկ և կը յափշտակին ֆրանսիական գլուխները Աստուած գիտն ուր» (2, 668):

Ստ. Լիսիցյանը բարձր է գնահատում Պուլշկինի և գրասիրությունը, և աշխատասիրությունը, ընդգծելով, որ նրա տաղանդի ուժը անդադար ինքնակրթւթյան մեջ էր, վկան՝ նրա մեծ գրադարանը: Ընթերցասիրությունը նրան բարձրացրեց հասակակիցների շարքից: «Նա հենց իւր առաջին ոտանաւորների մէջ ցոյց տվեց նուրբ ձևերի այնպիսի ճաշակ, այնպիսի ընդունակութիւն

օգտվելու լեզվի հարստութիւնից, որ ժուկովակու պէս արդէն անուն վաստակած բանաստեղծը բերում էր նրա մօտ իւր ոտանավորները և կարողում նրան, որպէս զի իմանայ նրա կարծիքը և տեսնի իւր գրածի տպավորութիւնը նրա վրայ» (2, 669):

Ստ. Լիսիցյանը հաստատում է, որ եթէ 19-րդ դարի ռուս գրականության մեջ բավականաչափ զարգացած է չափի զգացումը և ճաշակը, անկասկած, դրա համար պարտական է Պուշկինին, որի ստեղծագործությունները մի ահագին դպրոց էին հաջորդ բոլոր ռուս բանաստեղծների համար: Տուրգենևը նրանից յուրացրեց գեղարվեստն ու իրականությունը միացնելու հրաշալի գաղտնիքը: «Իրական գծերով կեանքը նկարագրելու եղանակը Պուշկինը անմիջապէս կտակեց Գոգոլին,- գրում է Ստ. Լիսիցյանը: Սրա գրական ճաշակի և ուղղութեան զարգացման համար նա ունեցավ թէ իւր գրվածքներով և թէ անծամբ իւր խոսակցություններով, ամենամեծ նշանակութիւն» (2, 667): Լիսիցյանը մատնանշում է, որ Պուշկինն ու Գոգոլը ռուսաց գրականությունը հանեցին նմանողականության շրջանից և կանգնեցրին ինքնուրույնության, ազգայնության և իրականության հողի վրա:

Իր այս բարձրարժեք պուշկինագիտական աշխատության մեջ Ստ. Լիսիցյանն անդրադարձել է մի շատ կարևոր հարցի առնչված ռուս մեծ բանաստեղծի ստեղծագործության մասսայականացման աստիճանին Ռուսաստանում և Եվրոպայում: Նա գրում է, որ Պուշկինը նույն հաջողությունը չունեցավ արտասահմանում, թեև այնտեղի համար նրա գրվածքները ինքնուրույնության գրավիչ բույրն ունեին: Եվ յուրովի բացատրում է պատճառը. «Գաղտնիքը այն հասարակական և քաղաքական գաղափարների մէջն էր, որ քարոզում էր Պուշկինը, այսինքն, նրա երկերում չէր կարելի գտնել հուզող հարցերի պատասխան: Այս առումով առաջնությունը տրվում է Բայրոնի ստեղծագործությանը: «Բայրոնը,- գրում է Լիսիցյանը,- բնական ծնունդ էր եվրոպական հասարակութեան կեանքի պայմանների: Նա սնված էր ժ.ժ. Ռուսոյի գաղափարներով և նրա պէս համոզված էր, որ մարդս այլանդակված է անհեթեթ սնահավատութիւններով և հասարակական ձևերով, հավատում էր բանականութեան ոյժին, քարոզում էր անպայման ազատութիւն և հնարավոր էր գտնում ազատութեան սկզբունքները իրագործել ու ընդհանուր բախտավորութիւնը հաստատել օրենսդրական և վարչական միջոցներով... Զգտումը դէպի իդէալականը նրանց կեանքի զարդն է, բայց և նրա «ժանգը»: Նա մաշում է մարդու գոյութիւնը: Այսպիսով, հիասթափումները և յռետեսութիւնը Բայրոնի բանաստեղծութեան հիմնական գծերն են, և այդ հոգեկան գծերը ուղղակի բղխում էին արևմտեան կեանքի այն ժամանակվայ պայմաններից» (2, 670-671):

Այս բացատրությունից հետո Լիսիցյանը գրում է, որ Պուշկինն էլ իր բայրոնական հափշտակության շրջանում արտահայտում էր նույնպէս անբա-

վականությունն աշխարհից և իրենից, ատելությունն դեպի մարդկությունը, որի հետևանքը եղան «Կովկասի գերին» և «Գնչուներ» երկերը: Գնահատելով Պուշկինի հաջորդ շրջանի գրվածքները, Լիսիցյանը գտնում է, որ նրանցում ռուս մեծ պոետն ավելի է հեռանում այն մտավոր պահանջներից, որոնք զգացվում էին արտասահմանում: «Կանգնելով զուտ իրական նկարագրության ճանապարհի վրայ, նա բարձր կատարելութեանը հասցրեց իր արտադրությունների գեղարվեստականությունը, բայց նրանց կապը առօրեայ կեանքի հետ հետզհետե ավելի թուլացավ» (2, 672):

Իսկ ինչո՞վ է բացատրում Լիսիցյանն այս երևույթը Պուշկինի մոտ: Նա գրում է, թե իբր այդ շրջանում Պուշկինը մի կողմից չէր ուզում անդրադառնալ քաղաքական խնդիրներին, մյուս կողմից՝ արդեն բավականին հալածանքներ էր կրել և ապա Նիկոլայ Առաջինի թագավորության միջոցին անկեղծորեն հաշտվելով կառավարության հետ, աշխատում էր որչափ կարելի է զգույշ լինել և հեռու մնալ այնպիսի կարծիքներից, որոնք որևէ կերպով կարող էին դուր չգալ վարչական շրջաններին:

Լիսիցյանն այնուհետև ավելացնում է, որ այդ շրջանի գրվածքների մեջ նույնիսկ ռուս ընթերցողները չէին գտնում իրենց հերթական հարցերի պատասխանը և այդ պատճառով սառչում էին բանաստեղծից, ինչ մնում է արտասահմանյան ընթերցողներին, այդ շրջանում արդեն հափշտակությամբ կարդում էին ֆրանսիական մոր բանաստեղծների գրվածքները, մանավանդ Վ. Զյուգոյի երկերը: Այնտեղ մոր գրական դպրոցն էլ գեղարվեստից պահանջում էր ազատ ոգևորություն ու բնականություն, բայց այս գեղարվեստագիտական տեսության հետ կապում էր հասարակական ու քաղաքական իդեալներ: Այս կարծիքի արդյունքում Լիսիցյանն ընդգծում է. «Լիւդովիկ 14-րդի գրականութիւնը յարմարեցրած էր միապետութեան, իսկ 19-րդ դարը պետք է ունենայ իւր յատուկ, անձնական և ազգային գրականութիւնը: Այս ռոմանտիզմի մեջ հետզհետե՛ դեմոկրատական սկզբունքները սկսեցին զորեղանալ. Վ. Զյուգոն ճանաչեց ժողովուրդը հասարակութեան բարօրութեան հիմքի հօգու ազատարար ոյժ երկրի քաղաքական և բարոյական անկման միջոցին: Այս սկզբունքներից և ոչ մեկը արծազանք չգտավ Պուշկինի երկերի մէջ» (2, 673):

Ստ. Լիսիցյանի այս կարծիքը չի համապատասխանում Պուշկինի կյանքի ոչ մի շրջանին, քանզի նա երբեք չի հաշտվել ցարական կառավարության հետ, չի ընդունել ճորտատիրական հասարակական կացութեանը, նրա ստեղծագործությունը ամբողջության մեջ ներծծված է անհատի և ժողովրդի ազատության ոգով: Անգամ աքսորի տարիներին նա իր ստեղծագործությունների մեջ հառնում էր քաղաքականապես, արտահայտում հեղափոխական տրամադրությունները: Նրա ռոմանտիկական պոեմները նորություն էին ռուս գրականության մեջ իրենց թեմատիկայով, հասարակ ժողովրդի հանդեպ

ունեցած հարգանքի զգացողությամբ, բարձրաստիճան հասարակության դեմ ունեցած ժխտական վերաբերմունքով:

Վերլուծելով Պուշկինի բանաստեղծություններից մեկը, որտեղ պոետը ասում է. «Կորեք ինձամից, ինչ գործ ունի խաղաղ պոետը ձեզ հետ: Անառակության մեջ քարացեք համարձակ, ձեզ չի կենդանացնի քնարի ծայրը: Հոգուն զգվելի եք դուք դագաղների պես: Ձեր հիմարության և չարության համար ունեցել եք դուք մինչև այսօր մտրակներ, բանտեր, կացիներ: Այդ էլ բավական է անմիտ ստրուկներիդ: Ձեր քաղաքներում աղմկալից փողոցներից աղբ են ավելում - օգտակար աշխատանք. բայց մոռանալով իրենց պաշտոնը - սեղանն ու զոհաբերությունը, քուրմե՞րն են, արդյոք, ձեր ձեռքից ավելը վերցնում», շրջանցելով դրա ենթաբնագրային երկիմաստ գաղափարը՝ Ստ. Լիսիցյանը գալիս է մի սխալ եզրակացության. «Այսպիսով բանաստեղծությունը, Պուշկինի աչքում բանաստեղծութեան համար էր, գեղարվեստը գեղարվեստի համար, առանց միտում ունենալու կեանքի վրայ ազդելու, կեանքի դրած խնդիրների լուծմանը նպաստելու» (2, 676):

Դժվար չէ կոնկրետ մատնացույց անել Ստ. Լիսիցյանի այս անընդունելի կարծիքի աղբյուրը: Կարող ենք մշել, որ ռուս իրականության մեջ եղել են ուժեր, որոնք չհասկանալով կամ միտումնավոր չեն գնահատել Պուշկինի ստեղծագործությունը ըստ էության: Նրա հակառակորդները նույնիսկ ժխտել են Պուշկինին որպես բանաստեղծ ու քննադատ:

19-րդ դարի երկրորդ կեսի սկզբից հանդես եկան ռադիկալ-դեմոկրատական ուղղության ներկայացուցիչները, որ համծին Ե.Գ. Չերնիշևսկու և Ն.Ա. Դոբրոյուբովի. զարգացրին ռուսական ռեալիստական քննադատությունը: Սակայն այդ ուղղության մեջ հանդես եկան որոշ գործիչներ, որոնք ձգտեցին քննարկել ու գնահատել ռուսական ռեալիզմի շրջափուլերն ու առանձնահատկությունները դեմոկրատական քննադատության մեջ:

Այդ գործիչների շարքում իր ռադիկալությամբ ու գեղագիտական դիրքորոշմամբ աչքի ընկավ Դմիտրի Իվանովիչ Պիսարևը (1840-1868): Կիսելով իր գրական դիրքորոշումները «Սովրեմեննիկ» հանդեսի հետ, առանձնապես Չերնիշևսկու և Դոբրոյուբովի ժամանակաշրջանում, նա ամպլակալ իր սրությամբ հակադրվել է նրանց հայացքներին, գրական-գեղագիտական իր գնահատումներում այդ ուղղությամբ տարանջատվելով նրանցից:

Պիսարևն իր գործունեությունը սկսել է «Рассвет» հանդեսում, որտեղ 1859թ. տպագրվել են նրա երեք գրախոսությունները Ի.Ա. Գոնչարովի «Օբլոնով», Ի.Ա. Տուրգենևի «Ազնվականական բույն» և Լ.Ն. Տոլստոյի «Երեք քույրեր» ստեղծագործությունների մասին: Այնուհետև, 1861 թվականից սկսած, Պիսարևը աշխատակցում է «Русское слово» ամսագրին: Այդ ամսագրում տպագրվում են նրա «Ժողովրդական գրքեր», «Պլատոնի իդեալիզմը»,

«Պիսեմսկին, Տուրգենևը, Գոնչարովը», «Մոսկովյան մտածողները», «Ռուսական Դոն Կիտտոը», «Արտասահմանյան պոետների բանաստեղծությունների ժողովածուն», «Բոլոր ժամանակների ու ժողովուրդների բանաստեղծները», «Բազարովը», «Ռուսական խղճուկ միտքը» և այլ հոդվածներ:

Նա որպես «ռեալիստական քննադատության հիմունքներ», բարձր է գնահատում Բելինսկուն, Դերբոյլուբովին, Չերնիշևսկուն, նրանց անվանելով «մտքի հսկաներ», «բարոյագիտության ուսուցիչներ»: Սակայն դրա հետ մեկտեղ նրանց գործունեությունը համարում է «Երեկվա օրվա փաստ»: Պիսարևը մերկացնում է իր նախորդներին «գեղագիտական միստիցիզմի», «ծևամոլության» մեջ, նրանց մոտեցնում «մաքուր» արվեստի տեսության կողմնակիցներին: Ելնելով գրականության առջև դրված «հումանիզացնել ռուս գյուղացիությանը» («гуманизировать русское крестьянство») չափանիշից, Պիսարևը Բելինսկու մոտ նկատում է «Պուշկինի առջև մանկականորեն - կույր խոնարհում», Դերբոյլուբովի մոտ ավելորդ լավատեսություն Տուրգենևի և Օստրովսկու ստեղծած տիպերի (Ինսարովի, Կուբանովա Կատերինայի) հանդեպ, Չերնիշևսկու պատմականության պակաս, Շչեդրինի հումորի թեթևություն ու մակերեսայնություն: Պիսարևը չի բացառում, որ քննադատությունը միշտ պետք է ընթանա գրականության հետ կողք կողքի, բայց նա, ըստ իր կարծիքի, պետք է լինի խիստ պատմական և կոնկրետ, բոլոր դեպքերում «հավերժական գեղեցկության» մասին վերացական մտածողության փոխարեն կատարի «զգոն վերլուծություն», ուղղված այն բանին, որպեսզի «պոեզիան լծվի» հասարակական օգտակարության «սայլին»:

1860-ական թթ. գրական բանավեճի մեջ մտնելով, Պիսարևը Պուշկինի մասին գրում է «Պուշկինը և Բելինսկին» (1865, «Եվգենի Օնեգին»- 1-ին գլուխ, «Պուշկինի քնարերգությունը» - 2-րդ գլուխ) հոդվածները՝ հանդես գալով «ռեալ քննադատության ծայրահեղ դիրքերից», որը շատ մոտ է իր կողմից սիրված տուրգենևյան հերոս Բազարովի «նիհիլիստական» հայացքներին: Առաջին հերթին Պիսարևը պակասգնահատում է անում Պուշկինին նրա ստեղծագործության բովանդակության առումով: Իր սեփական մոտեցումները համեմատելով Բելինսկու գնահատականների հետ, նա բացարձակորեն չի ընդունում իր նախորդի գնահատականը, ըստ որի, «Եվգենի Օնեգին» պոեմը համարվում է ռուսական կյանքի «համրագիտարան»: Օգտագործելով Պուշկինի բնագիրը՝ Պիսարևը ձգտում է ցույց տալ պոեմի բովանդակության «մանր» լինելը, որ իբր Պուշկինը նրանում նկարագրել է բալերը, ճաշկերույթները, արտիստոսիներին, գեղեցիկ ոտքեր և այլն: Դրանով հանդերձ, նա լրիվ նույնացնում է Պուշկինին և Օնեգինին իրենց կենցաղավարությամբ ու հայացքներով: Այսպիսով, ինչպես ենթադրում էր Պիսարևը, հասարակության հանդեպ, ճորտատիրության դեմ



ունեցած պայքարում, սովյալների և ընչազուրկների օգնության առումով Պուլշկինի չափածո վեպը, ինչպես և Օնեգինի կերպարը, օգտակար չեն:

Որպես Ռուսաստանի հասարակական-գրական զարգացման նոր փուլի ներկայացուցիչ՝ Պիսարևը Պուլշկինի և նրա հերոսների գլխավոր թերությունը համարում է խորաթափանց մտքեր և համոզմունքներ չունենալը: Նման ոչ պատմական ու ոչ գեղագիտական մոտեցմամբ Պիսարևը փորձել է ժխտել Պուլշկինին ու նրա ամբողջ ստեղծագործությունը:

Պիսարևը Պուլշկինի՝ պոետի և պոեզիայի մասին գրած նյութերի հիման վրա նրան ժխտում է, թե իբր նա չի հասկացել ժողովրդին և նրա շահերը՝ կապված Ռուսաստանում «հասարակական կացութեմե» փոփոխման հետ: Պիսարևը ձգտում է ապացուցել, որ Պուլշկինը, ի հակակշիռ Գոգոլի կամ Սալտիկով-Շչեդրինի, հանդիսանում է «մաքուր արվեստի» ներկայացուցիչ, որին չի հետաքրքրում հասարակության, ժողովրդի կյանքը: Եիշտ է, Պիսարևը վերապահումով նշում է, որ Պուլշկինն իր ժամանակ «հնարավորություն չի ունեցել» որոշել «մասսաների շահերը» կամ առանձնացնել «հասարակական կարծիքը»: Սակայն դա չի փոխում ընդհանուր կարծիքն այն մասին, որ Պուլշկինը «ոտանավոր թխող է» ու «մեծ ոճաբան»: Իսկ Բելինսկին, իբր, իր բարությանը ու միատնությունը հանձին Պուլշկինի, տեսել է մեծ գեղագետի, մարդու «իրավունքի և պարտականությունների» մարտիկի: «Գեղագիտության կործանումը» (1865) հոդվածում Պիսարևը արվեստը հակադրում է գիտությանը և գերադասելով գիտությունը, որը, տիրապետելով վերլուծության միջոցներին, մեծ հաջողությամբ ընդունակ է ճանաչել ճշմարտությունը: Այդ աշխատանքում Պիսարևն ավելի հեռուն գնաց, հայտարարելով, որ գեղագիտությունը անօգտակար գիտություն է:

Այսպիսով, Պիսարևն ինքը գծեց այն սահմանը, որ բաժանում է իր դիրքերը նախորդների հայացքներից: Առաջնակարգ խնդիրների շարքում նա տեսնում է ոչ գրական, պրակտիկ խնդիրներ: Դատելով նրա ելույթների սրությունից՝ նա պատրաստ է եղել ոչ միայն գիտական-հրապարակախոսական, այլ նաև ուզածով «պրակտիկ» գործունեության իրեն հայտնի ուղղություններում: Սահմանազատվելով Բելինսկուց, Չերնիշևսկուց, Դոբրոլյուբովից, Պիսարևը հանգել է և իր ժամանակի, և գալիքի համար անընդունելի հետևությունների թե իր հսկա նախորդների մարգարեական ընդհանրացումների և թե գեղագիտության ու արվեստի տեղի ու դերի գնահատման առումներով, իրեն դրսևորելով որպես պոզիտիվիզմի փիլիսոփայության և կոպիտ օգտապաշտության ներկայացուցիչ:

Ա.Ա. Պուլշկինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ գրած իր ուսանելի աշխատության մեջ Ստ. Լիսիցյանը ինչ-որ չափով տեղի է տվել Պիսարևի ոչ պատմական այն հետևությանը, ըստ որի, Պուլշկինը տեղի է տվել «մաքուր արվեստի» տեսությանը:

Կարևոր ենք համարում նաև նշել հայ պուլկինագիտության մեջ մի ուրիշ ոչ լուրջ երևույթ, որ կապված է «Նեո-պիսարևական» դիրքերի հետ հանձին Դովհաննես Գնունու «Ինչ է կտակել իր ազգին Ա.Ս. Պուլկինը» ծավալուն հոդվածի, տպագրված «Նոր փորձ» գրական-հասարակական հանդեսի 1897թ. թիվ 1 համարում: Դ. Գնունին հետևելով Պիսարևին, Պուլկինի պոեզիան համարում է անպետք և անօգուտ մի բան ժամանակակից սերնդի համար, որովհետև չի կարող պատասխանել նրա հանապազորդ ամենատարրական պահանջներին: Բացի դրանից, Գնունին գտնում է, որ Պուլկինը ոչ մի լուրջ նշանակություն չի կարող ունենալ օտար ազգի մոտ, որ նրա «Կովկասի գերին», «Բախչիսարայի շատրվանը», «Գնչուներ» պոեմները թույլ ու անհամ, համարյա երեխայական գրվածքներ են, իսկ նրա գլխավոր գործերը «Եվգենի Օնեգինը» և «Բորիս Գոդունովը», ոչ մի համամարդկային գաղափար չեն պարունակում: Այս «քննադատը» խորհուրդ է տալիս հայ բանաստեղծներին և թարգմանիչներին չտարվել Պուլկինի երկերով, նրանց վրա ժամանակ չկորցնել կարդալու կամ թարգմանելու:

Դ. Գնունու այս պիսարևական թիվածքը անպատասխան չի մնացել հայ իրականության մեջ: Ժամանակի ճանաչված գրականագետ և թարգմանիչ Սեդրակ Թառայանը Գնունու մասին գրել է. «Բոլորովին պարզ երևում է, որ հեղինակը (Գնունին) կատարելապես չի հասկանում զեղարվեստի իսկական էությունը: Գեղարվեստը մարդու ամենաբարձր, ամենասուրբ զգացումների արտահայտությունն է... զգացումներ, որոնք դուրս են վաճառականական կամ ստամոքսային հաշիվներից, որոնք երկրի վրա մարդու երկնային կյանքն են կազմում, որոնք զմայլեցնում են մարդուն և, մյուս կողմից, ընդունակ են դարձնում դրան «աստվածային» քայլեր անելու: Սրանք են, որ մարդուն բարձր են պահում «անասուններից» (3, 762):

Դ. Գնունու հակապուլկինյան ելույթը չվրիպեց նաև ժամանակի մշակութային հայտնի գործիչ, «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավ. Արասխանյանի ուշադրությունից: Գնունու կեղծ տագնապին, որ հայ պոետները ժամանակ չվատնեն Պուլկինի երկերի վրա, Արասխանյանը գրեց. «Ընդհակառակը, հայ գրականությունը միայն նոր-նոր սկսում է ծանոթանալ Պուլկինի հետ: Եվ Պուլկինը առնվազն այնքան արժեք ունի, որ նորա հետ ծանոթանալը հայ հասարակության համար միանգամայն անհրաժեշտ է: Պուլկինի ռեալիստական բանաստեղծության հմայքի դեմ կատարելապես անգոր են պ. Գնունու առաջ բերած այն ցիտատները, որոնցով Պուլկինը յուր թեթև վերաբերմունքն է ցույց տվել դեպի կյանքը, պոեզիան, ամբոխը: Այդ ցիտատներով դուք երբեք ավելորդ չեք դարձնիլ Պուլկինի ընթերցումը: Սեր կարծիքով, ավելի շնորհապարտ թեմա կլիներ գրել այն մասին, թե ինչու Պուլկինը, չնայած յուր բոլոր պակասավոր հայացքներին, այնուամենայնիվ, կարդացվում է և դեռ շատ տարիներ կար-

դացվելու է, քան անհանգստության մեջ ընկած շտապել և Պուշկինի դեմն առնելու հոգսը բաշել» (4, 1425-1426):

Հայ պուշկինագիտության զարգացումն ու հարստացումը 19-րդ դարի վերջին հաճախ ընթացել է երկիմաստ գնահատումներով, որ հետաքրքիր է թե բանասերների ինքնադրսևորման և թե հասարակական-ազգային դիրքորոշումների տեսակետից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Լուսա», 1899, Գիրք Բ:
2. Լիսիցյան Ստ., «Մուրճ», 1899, թիվ 6:
3. «Տարազ», 1897, թիվ 48:
4. «Մուրճ», 1897, թիվ 10:

Pushkin appraised in the Armenian Critical Reviews of the 19th century

During the second half of the 19th century there was no Armenian poet whose creative inspiration and intuition would not have been lit and shown up through the shine of Pushkin's poetry. It becomes obvious in their own verses and their translations of Pushkin's poetry (see Mkrtich Emin, Hovhannes Hamazaspian, Rafael Patkanian, Ghazaros Aghayan, Mikael Nalbandian, Hovhannes Hovhannisian and others).

Getting acquainted with the resonance of Pushkin's works in the Armenian reality, particularly, with the translations of latter into Armenian, one comes to the conclusion that the bases of Pushkin studies were laid locally by those Armenian poets who undertook the translations of Pushkin's poems in particular, as such translations comprise the translator's attitude towards the Author. And finally, the scientific approach by the people of art towards the representatives of other cultures is basically shaped up through translations, as well. Such an approach should be adopted as for the emergence and development of Pushkin studies in Armenia, without discarding the articles written by the Armenian critics and scientists on Pushkin's heritage and published in the 19th century press. It is worth mentioning that the scarce reviews and comments published between the 1860s and the 1880s by the end of the century had already been substituted by vast number of specialized and exciting articles on Pushkin studies. Among those of real professional interest for Pushkin studies we should mention the articles by Hovhannes Gnuni (published in "Nor Pordz" in 1897), Av. Araskhanyan (published in "Murch" in 1899), by Yervand Topchyan (published in "Taraz" in 1899), by Harutiun Tumanyan (published in "Luma" in 1899) and some others.

At the end of the 19th century the celebration of the 100th anniversary of Pushkin was vividly and immensely marked up by St. Lisitsian's publications. His survey titled "The Trends in the Russian Literature in the 18th century and at the beginning of the 19th century" (published as a series of articles in issues number 4, 5, 6 of periodical "Murch" in 1899), which might be considered as a unique perception and individual approach towards Pushkin's heritage, to certain extent, following up the critical traditions worked up by Belinski.